

02
ՀՈՒԼԻՍԻ
2021



ՀՀ 2020Թ. ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



2020թ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության կազմման նպատակով Հաշվեքննիչ պալատը (այսուհետ՝ ՀՊ) իրականացրել է թվով 65 հաշվեքննություններ 17 կատարող գերատեսչություններում, որոնց բաժին է ընկնում ՀՀ պետական բյուջեի ծախսային մասի 90.3%-ը:

Հաշվեքննությունների արդյունքում արձանագրվել է, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 12 գերատեսչություններում առկա է եղել 171 անհամապատասխանություն: Ըստ նշանակալիության՝ ՀՊ-ն արձանագրել է 78 անհամապատասխանություն, որից՝

- առանցքային՝ 6,
- ՀՀ օրենքների պահանջների հետ՝ 23,
- ՀՀ ենթաօրենսդրական պահանջների հետ՝ 35,
- պայմանագրային պահանջների հետ՝ 14:

Նշենք, որ առանցքային անհամապատասխանությունները վերաբերել են.

- Դպրոցների ֆինանսավորմանը, որը չի պլանավորվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բանաձևին համապատասխան, և արդյունքում արձանագրվել են 2.52 մլրդ դրամի չափով շեղումներ:
- Ավտոճանապարհների պահպանմանը, որի մասով արձանագրվել են մի շարք ավտոճանապարհներ ՀՀ օրենսդրության պահանջներին ոչ համապատասխան նշանակությամբ դասակարգելու, ինչպես նաև ավտոմոբիլային ճանապարհի խումբը ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված հիմնավորմամբ բարձրացնելու արդյունքում այդ ճանապարհների պահպանման համար սահմանվածից առնվազն 274.1 մլն դրամով ավելի գումարների հատկացման դեպքեր:
- Պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաներին, որոնց մասով արձանագրվել են գումարների ոչ նպատակային օգտագործման դեպքեր:

Հաշվեքննությունների արդյունքներում արձանագրվել է, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5 գերատեսչություններում առկա են եղել 42

խեղաթյուրումներ, որոնց ընդհանուր գումարը կազմել է 801,223.53 հազ. դրամ կամ հաշվեքննված գերատեսչությունների փաստացի տարեկան ծախսի 0.05%-ը:

ՀՀ պետական բյուջեի կատարողականի մասով ՀՊ կողմից 2020 թվականին արձանագրված առավել ուշագրավ խախտումները և դրանց վերացման մասով ՀՊ առաջարկությունները ներկայացված են ստորև:

ՀՊ կողմից գնումների գործընթացի վերաբերյալ իրականացված հաշվեքննությունների արդյունքում արձանագրվել է, որ 2020թ. պետական մարմինների կողմից կնքված գնման պայմանագրերի 39.4%-ը կնքվել են մեկ անձից գնման ձևով, որոնց մասով ընդամենը գումարը կազմել է 125,592,200.0 հազ. դրամ: 2019թ. համեմատ՝ այս պայմանագրերի ընդամենը գումարի տեսակարար կշիռը բոլոր տեսակների պայմանագրերի ընդամենը գումարի մեջ աճել է 4.39%-ով: Նշենք նաև, որ 2020թ. ընթացքում կազմակերպված գնման ընթացակարգերին միջին մասնակցության ցուցանիշը չի փոխվել 2019թ. համեմատությամբ և շարունակում է մնալ ցածր՝ 1.7 հատ մասնակցի մակարդակում: 2020թ. գնումների գործընթացում արձանագրվել է հետընթաց նաև տնտեսման գործընթացի հետ կապված:

Պետական բյուջեի ծախսերի ծրագրային դասակարգման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքում Հաշվեքննիչ պալատն արձանագրել է.

- Թվով 109 միջոցառում՝ ավելի քան 67 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, նախատեսված «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով՝ չի կատարվել, այլ կերպ ասած՝ դրանց գծով վճարումներ չեն իրականացվել:
- Թվով 17 միջոցառում, գրեթե 1.5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չեն եղել, ճշտված ծրագրով նախատեսվել են, սակայն փաստացի չեն կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել:
- Թվով 68 միջոցառման փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 50%-ից ցածր (ներառված չեն չկատարված ծրագրերը)՝ առաջացնելով տարեկան ճշտված ծրագրի նկատմամբ 24.6 մլրդ դրամի շեղում:

Հաշվեքննիչ պալատի կողմից վերլուծվել է նաև **պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշների կատարողականը**: Վերլուծությամբ պարզվել է հետևյալը.

- 244 ծրագրային միջոցառումների գծով (ընդհանուրի 17.7%-ը) որևէ ոչ ֆինանսական ցուցանիշ սահմանված չի եղել:
- 762 ծրագրային միջոցառումների գծով (ընդհանուրի 55.3%-ը) սահմանված է եղել միայն մեկ տեսակի (հիմնականում՝ քանակական) ոչ ֆինանսական ցուցանիշ, ինչը բավարար չէ ծրագրային միջոցառումների արդյունքների

լիարժեք գնահատման, հետևաբար՝ նաև դրանց կատարման արդյունավետության լիարժեք գնահատման համար:

- Միայն 97 ծրագրային միջոցառումների գծով (ընդհանուրի 7%-ը) է սահմանված եղել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային լիարժեք կազմ:
- Որակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների թիվը շարունակում է փոքր մնալ՝ կազմելով ընդհանուրի 14.9%-ը:

Հաշվեքննիչ պալատն ընդգծել է պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշների հետ կապված իրավիճակի շտկման կարևորությունը: Արդյունքում առաջարկվել է.

- Սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշներ այն քաղաքականության միջոցառումների գծով, որոնց համար այդպիսիք դեռևս սահմանված չեն:
- Սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային առավել լիարժեք կազմ՝ մեծացնելով ոչ քանակական տեսակի, հատկապես որակական տեսակի ցուցանիշների ծածկույթը:
- Հաշվետվողականության գործընթացում թույլ չտալ պլանավորված ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի արդյունքների չներկայացման, ինչպես նաև պլանավորված և փաստացի կատարված արդյունքային ցուցանիշների միջև շեղումների դեպքում տարբերության պատճառների չներկայացման փաստեր՝ արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ ապագա հաշվետվությունները ներկայացնելիս:

ՀՊ կողմից վերլուծվել է վերջին տարիներին **պետական մարմիններում անցկացվող ներքին աուդիտի գործընթացը** և արձանագրվել է հետևյալը.

- 2020թ. պետական մարմիններից 42%-ում ներքին աուդիտ չի իրականացվել:
- 2020թ. շարունակվել է անցկացված աուդիտների առաջադրանքների թվի (869) անկումը, որը 2019թ. համեմատ նվազել է 39.2%-ով, իսկ 2018թ. համեմատ՝ 63.9%-ով:
- Որակական առումով, 2020թ. նախորդ տարվա համեմատությամբ անկում է ապրել ինչպես «ներքին աուդիտի արդյունքների արդյունավետության գնահատականը»՝ 3.3 միավորից նվազելով 3-ի, այնպես էլ «աուդիտի ենթարկված մարմինների կողմից ներքին աուդիտին տրամադրված գնահատականը»՝ 3.5-ից նվազելով 3.2-ի:
- Ներքին աուդիտ իրականացրած 29 պետական մարմիններից 14-ի (48.3%) դեպքում այդ գործառույթն իրականացրել են մասնավոր կազմակերպությունները:

Պետական մարմինների ներքին աուդիտի վերաբերյալ կազմված արձանագրությունների մասով ՀՊ-ն առաջարկել է.

- Հանրային հատվածում ներքին հսկողության համակարգի արդյունավետության բարձրացման, ֆինանսական կարգապահության բարձրացման նպատակով քայլեր ձեռնարկել 2021թ. ընթացքում պետական մարմիններում ներքին աուդիտի իրականացման ծածկույթի ընդլայնման ուղղությամբ:
- Կիբեռանվտանգության ռիսկերի գսպման նպատակով մեծացնել «տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ» տեսակի ներքին աուդիտի քանակը:
- Քայլեր ձեռնարկել ներքին աուդիտի տարեկան ծրագրերի առնվազն 30%-ի չափով կատարողականի աուդիտներ իրականացնելու ուղղությամբ:

Պետական բյուջեի կատարման մասով արձանագրված այլ խնդիրների հիման վրա ՀՊ կողմից կատարվել են նաև հետևյալ առաջարկությունները.

- Օրենսդրորեն ամրագրել պահանջ, որ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման համար պատասխանատու յուրաքանչյուր մարմին մշակի իր կողմից հավաքագրվող եկամուտների կանխատեսման մեթոդաբանություն:
- ՀՀ բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՈԱԿ-ների, պետական և համայնքային սեփականությամբ բաժնետիրական ընկերությունների և հիմնադրամների հաշիվներն առևտրային բանկերից տեղափոխել գանձապետարան:
- Ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը ներառել ներքին տոկոսավճարների գծով ծախսի կազմում:
- Սահմանել պատասխանատվության միջոցներ դոտացիաների տրամադրման և օգտագործման պայմանների չկատարման համար (բացառությամբ բարձր դոտացիոն համայնքների), այդ թվում՝ հաջորդ տարիներին տրամադրվող դոտացիայի գումարների կրճատման տեսքով:
- Կատարել պետական պարտքի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը միտված՝ Հաշվեքննիչ պալատի 2019թ. դեկտեմբերի 24-ի N 28/2 որոշմամբ հաստատված ընթացիկ եզրակացությունում ներկայացված առաջարկությունները:

Ըստ Հաշվեքննիչ պալատի եզրակացության՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեի վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշգրիտ ներկայացնում են ՀՀ 2020թ. պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունը: Ըստ այդմ, Հաշվեքննիչ պալատը ՀՀ 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրամադրել է «*դրական եզրահանգմամբ՝ հաշվեքննության կարծիք*»:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: